ՄԱՐԻԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋՈՒՂԱՅԻ ՆՈՐ ԽԱՉՔԱՐԵՐԸ

Մշակութային քաղաքականության ոլորտի նվաճումների շնորհիվ օրըստօրե մեծանում է մշակույթի դերը տարբեր ներքաղաքական եւ արտաքին քաղաքական ոլորտներում: Սակայն, իր բոլոր դրական կողմերին զուգահեռ, այն սկսել է լայնորեն կիրառվել նաեւ որպես ազդեցիկ գործիք որոշակի քաղաքական նկրտումների հասնելու համար, որն իրագործվում է մշակութային ժառանգության վնասման կամ ոչնչացման միջոցով: Թեեւ վերջինս ուղղված է այլ հանրության ապագայի դեմ, սակայն, գործ ունենալով հուշարձանի հետ՝ առնչվում է անցյալին: Սա նոր մարտահրավեր է նեղում տուժած կողմին վերստեղծելու վնասված կամ ավերված հուշարձանը՝ շարունակելու խաթարված պատմական գիծը, կամ թողնելու որպես պատմության մի դրվագ, եղելություն, որը կծառայի իբրեւ հիշեցում կատարվածի: Սակայն խնդիրն առավել բարդանում է, երբ տուժած կողմը զուրկ է հուշարձանը ավերման վայրում վերականգնելու հնարավորությունից: Դրա պատճառներից մեկը կարող է լինել հուշարձանի՝ բռնակցված շրջանում գտնվելը, ինչի օրինակն է Ջուղայի խաչքարային դաշտը, որը 1998-2006 թթ. ազերիները հիմնահատակ ավերեցին:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Ջուղայի խաչքարերի ոչնչացմանը հաջորդած արձագանքը՝ քննելով Հայաստանի տարբեր վայրերում, տարբեր վարպետների ստեղծած խաչքարերի կրկնօրինակները: Հստակեցնելով «կրկնօրինակ» եզրը՝ հարկ է պարզաբանել, որ այն օգտագործվել է «վերստեղծված» իմաստով, քանի որ արվեստի նմուշի կրկնօրինակում նշանակում է բնօրինակի անխախտ վերարտադրում[1]: Մինչ բուն վերստեղծման գործընթացին անդրադառնալը ներկայացվում են մշակութային ժառանգության դերի, պահպանության խնդիրները՝ դիտարկելով դրանք էթնիկ հիշողության եւ մշակութային քաղաքականության եզրահատքում՝ համապատասխան հարթակ ապահովելով նյութի առավել խորքային քննության համար: Խաչքարերի մասին դիտարկումներն արված են՝ հենվելով դաշտային հետազոտությունների եւ հարցազրույցների վրա: Նոր խաչքարերի ծավալատարածական եւ հորինվածքային առանձնահատկությունները ներկայացվում են տվյալ խաչքարերի բնօրինակների լուսանկարների հետ համեմատական քննության միջոցով: Հատուկ շեշտադրում ունի վարպետի եւ պատվիրատուի

1 Վերստեղծված նյութական ֆորման այս դեպքում հանդես է գալիս ոչ որպես նախկին ինքնության կրող, այլ որպես կորսված իրի խորհրդանիշ. **Ю. Г. Бобров**, Теория реставрации памятников искусства: закономерности и противоречия, М., 2004, Воссоздание утраченных памятников искусства, http://art-con.ru/node/871, 5.04.2013:

գործոնը, հաշվի է առնված յուրաքանչյուրի անհատական մոտեցումը եւ դրդապատճառը խաչքարերի կերտման գործում:

Ջուղայի նոր խաչքարերը ավելին չեն քան անհատական ինքնեկ նախաձեռնությունների արդյունք: Թեեւ խաչքարերի ավերումն իր մասշտաբներով, միջազգային համաձայնագրերի բազմաթիվ խախտումներով եւ մեր մշակույթի համար այդ գերեզմանադաշտի կարեւորությամբ կարող էր հավակնել հայկական կողմից ինչպես դատապարտման, այնպես եւ նոր խաչքարերի կերտման գործում պետական առավել ազդեցիկ եւ մասշտաբային ներգրավվածության, սակայն գործնականում դա տեղի չունեցավ: Փոխարենը մի քանի անհատներ, որոնց թվում՝ խաչքարագործ վարպետներ, պաշտոնյա, հոգեւորական, նկարիչ, փայտափորագրիչ, փորձեցին ավերմանն արձագանքել կատարվածի հանդեպ սեփական պատկերացումների եւ նախապատվությունների շրջանակներում: Եթե մեկի կողմից կարեւորվել է զուտ վերստեղծելու գաղափարը՝ ի հակադրություն կործանման, մյուսի համար առանցքային է եղել պահպանել դպրոցի առանձնահատկությունները: Եթե մեկի առաջնայնությունն է եղել իր կերտածով իրազեկել հայ եւ միջազգային հանրությանը, մեկ այլ վարպետ ինքն իրեն մարտահրավեր է նետել կերտման հարընթացի մեջ հասնել նախնի վարպետի ու բնօրինակի հետ կատարյալ նույնության: Ուստի նոր խաչքարերը, կատարման որակով, քանակով, օրինակների ընտրությամբ, բնօրինակին հավատարիմ մնալու չափով, տեղակայման վայրերով, արտացոլում են այն դրդապատճառները, որոնցով առաջնորդվել են նախաձեռնողները:

Ազգամիջյան բախումները հաճախ ուղեկցվում են միմյանց մշակութային ժառանգության հանդեպ թշնամանքով, որը, որպես կանոն, դրսեւորվում է հուշարձանների հանդեպ ոտնձգություններով, վանդալիստական գործերով: Առանձնացվում են ժառանգությունը ոչնչացնելու մի քանի պատճառներ. «Ոչնչացնել այն, ինչ ամենահարազատն է, սրբել Այլոց ցանկացած պատմական հետք, ջնջել ցավոտ կամ վիճահարույց անցյալի հիշեցումները, վերացնել որպես ճնշում ընկալվող խորհրդանիշները»[2]: Ըստ Պ. Կոնդապպայի՝ մշակութային ժառանգության կործանումը արթնացնում է հուզական արձագանք: Նյութական մշակույթը զորավոր եւ ակնառու կապ է, որը միակցում է թե՛ անհատական, թե՛ խմբային հիշողությունները: Այն ապահովում է օրինականության շոշափելի եւ խոսուն հիմք, որը կարող է օգտագործվել՝ ապացուցելու տարածաշրջանի եւ հատկապես էթնիկ իսկության վերաբերյալ պատմական պնդումները[3]: Այն, ինչ քիչ թե շատ անվնաս հայտարարություն է մի քաղաքական ենթատեքստում, կարող է լուրջ քաղաքական նշանակություն ձեռք բերել մեկ այլ հարաբերության մեջ, երբ ենթատեքստը փոխվում է: Օրինակ՝ «Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության զարգացումը» գիրքը[4], խոսելով այդ տարածաշրջանի պատմության մասին՝ սկսած նախապատմական ժամանակներից մինչեւ մեր օրերը, երբեք չի նշում հայերին, չնայելով այն հարյուրավոր

2 Տե՛ս **N. Packard**, Sociology of Memory: Papers from the Spectrum,Cambridje Sc Publishing, 12 Back Chapman Street, Newcastle upon Tyne, NE6 2XX, UK, 2009, էջ 16:

3 Տե՛ս **P. Condappa**, Cultural Genocide in Bosnia-Herzegovina; Destroying Heritage, Destroying Identity, http://traumwerk.stanford.edu:3455/culturesofcontact/admin/download.html?attachid=2628, 23.05.13:

4 Տե՛ս **Д. Гулиев**, Советская Нахичевань, Азербайджанское гос. изд-во, 1984:

մշակութային հուշարձանների, որոնք լուռ վկայում են իրենց իսկ հազարամյա ներկայության մասին այդ վայրերում[5]:

Մշակութային ժառանգությունը, որպես հանրության ազգային ինքնության ցուցիչ, օգնում է կապել անցյալը ներկային եւ զգալ որոշակի արժեքների կրող ու ժառանգորդ, ինչն իր հերթին պարտավորություն է առաջացնում այն փոխանցելու սերունդներին: Ազգամիջյան հակասությունների ժամանակ հուշարձանների դեմ ուղղված քայլերը միտված են առաջին հերթին հոգեբարոյական վնաս հասցնելու՝ փորձելով ջնջել հակառակորդի մշակութային հետքը, կապը վվյալ տարածքի հետ: Դրա ամենաակնառու դրսեւորումներից է Ադրբեջանի մշակութային քաղաքականությունը: Ինչպես նշում է Ն. Մարությանը մինչ շարժումն ընկած ժամանակահատվածի մասին. «Ամեն հայկականի ժխտումն ուներ միանշանակորեն գիտակցված բնույթ, եւ նպատակ էր հետապնդում Ղարաբաղի հայերի էթնիկ ինքնագիտակցության մեջ ոչնչացնելու դրա բազմաթիվ տարրերը՝ հայկական ծագումը, պատմական հիշողությունը, էթնիկ խորհրդանիշերը եւ այլն, թուլացնելու հայկական արժեքային կողմնորոշումների կառուցվածքը, եւ այդպիսով ազգային պատկանելության փոփոխության համար պատմահոգեբանական հող նախապատրաստելու: Հենց դա հայերի կողմից մեկնաբանվեց որպես ոտնձգություն ազգային ինքնության ու, մասնավորապես, պատմական հիշողության նկատմամբ եւ, ի թիվս այլ էական գործոնների, ոտքի հանեց պայքարի՝ հանուն պատմական ճշմարտության վերականգնման»[6]: Այդ վտանգը հաշվի առնելով՝ մշակույթին առնչվող միջազգային ատյանները մի շարք կոնվենցիաներ ու համաձայնագրեր են ստեղծել՝ մշակութային հուշարձանները նման իրադրություններում պաշտպանելու նպատակով[7]: Այլ հարց է, թե որքանով են դրանց հետամուտ լինում այս կամ այն երկրներում: Հակառակ պարագային չէին արձանագրվի դեպքերը՝ կապված Բամիանի, Սերբիայի, Հունաստանի, Հայաստա-

5 Տե՛ս **Philip L. Kohl**, Clare Fawcett, Nationalism, politics, and the practice of archaeology, Cambridge University Press, 1995, էջ 153-155:

6 **Ն. Մարության**, Ցեղասպանության հիշողությունը որպես նոր ինքնության ձեւավորիչ (1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ. սկիզբ), hpj.asj-oa.am/3516/1/2005-1(55). pdf, էջ 56-57:

7 Տե՛ս "The Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict (14 May 1954)". http://portal.unesco.org/culture/en/ev.php URL_ID=35744&URL_DO=DO_TOPIC&URL_SECTION=201.html, 23.05.13.

"The World Heritage Convention for the Protection of Global Cultural and Natural Heritage (16 November 1972)". http://whc.unesco.org/en/conventiontext/, 23.05.13.

"The Convention on the Protection and Promotion of the Diversity of Cultural Expressions (20 October 2005)". http://unesdoc.unesco.org/images/0014/001429/142919e.pdf, 23.05.13.

"Treaty on the Protection of Artistic and Scientific Institutions and Historic Monuments (15 April 1935)". http://www.un-documents.net/tpasihm.htm, 23.05.13.

"The European Cultural Convention (19 December 1954)". http://www.socio.msu.ru/documents/umo/bologne/EUROPEAN%20CULTURAL%20CONVENTION.pdf, 23.05.13.

"The European Convention on the Protection of the Archaeological Heritage (6 May 1969)". http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/143.htm, 23.05.13.

"The European Convention on Offences relating to Cultural Property (23 June 1985)". http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/119.htm, 23.05.13.

"The Convention for the Protection of the Architectural Heritage of Europe (3 October 1985)". http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/121.htm, 23.05.13:

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3

Նկ. 4

Նկ. 5

Նկ. 6

Նկ. 7

Նկ. 8

Նկ. 9

Նկ. 10

նի՝ մասնավորապես Ջուղայի (համաձայն Շվեյցարիայի «Հայաստան» Ընկերակցության ներկայացրած փաստաթղթի՝ Ջուղայի պարագային խախտվել են ներկայացված բոլոր կոնվենցիաները[8]) եւ շատ այլ երկրների հուշարձանների հետ:

Այժմ դիտարկենք այն գործընթացը, որը հաջորդում է հուշարձանների վնասմանը կամ ավերմանը: Միանգամայնորեն պարզ ու արդարացի է, որ նման գործողություններն արժանանում են տուժած կողմի համընդհանուր քննադատությանը: Սակայն կորստի գիտակցումը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է անդառնալի կորստին, աստիճանաբար տեղափոխվում է խոր զգայական դաշտ՝ խոցելով մարդկանց ազգային ինքնագիտակցությունը, խմբային հիշողությունը (ինչը տեղի ունեցավ Սերբիայում ազգային արխիվի կործանումից հետո[9]): Կորցնելով մշակութային ժառանգության որեւէ մաս՝ մարդիկ կորցնում են իրենց պատմության մի մասը, սեփականության զգացումը, հանրային հիշողությունը՝ կապված տվյալ տեղի կամ հուշարձանի հետ: Հաղթահարելով վնասման կամ կործանման հետեւանքով առաջացած առաջնային՝ զգայական հարվածի ազդեցությունը՝ անցում է կատարվում հաջորդ՝ կառուցողական փուլ, սկսում է մշակվել ռազմավարություն կորսվածը վերականգնելու ուղղությամբ (Քութահիսի ավերված՝ «Ֆաշիզմի դեմ հաղթանակի» հուշարձանի կրկնօրինակի կանգնեցումը Մոսկվայում ռուսական իշխանությունների կողմից[10], Մոստարի կամուրջի վերականգնումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից[11]), կամ դա տեղի է ունենում ինքնեկ, անհատական նախաձեռնությունների միջոցով:

Սա խոսում է այն մասին, որ ֆիզիկական ոչնչացումից հետո հուշարձանը շարունակում է պահպանել իր գոյությունը այն կրող հանրության կամ անհատների հիշողության մեջ: Վերջինս երբեմն վերստին նյութականացման ընթացք է անցնում՝ արդեն նոր, վերամշակված կերպով:

Ադրբեջանի կողմից Արցախի եւ Նախիջեւանի հայկական մշակութային հուշարձանների բռնայուրացումը, ըստ Հ. Պետրոսյանի, իրականացվել է երկու հիմնական մեխանիզմներով: Քանի որ հայ-քրիստոնեական եւ թաթար-մուսուլմանական մշակույթների միջեւ հակասությունը առավել քան ակնհայտ է, ապա, որպես բռնայուրացման մեխանիզմ ծառայել է այդ մշակույթների «ընդհանուր ակունքների», «հարազատության», «նույնականության» վերհանումը: Հաջորդ մեխանիզմը միջանկյալ օղակի («միջնորդավորված ուղի») ստեղծումն էր, որը նպատակ ուներ Արցախի մշակութային ժառանգությունը վերագրել աղվաններին, եւ նրանց միջոցով նաեւ՝ ադրբեջանցիներին[12]: Օրինակ՝

8 Switzerland-Armenia Association (SAA), Accountability for Destruction of Cultural Heritage: The case of Jugha, Bern, 2006. http://www2.ohchr.org/english/bodies/cescr/docs/ngos/SAA_AzerbaijanWG49.pdf, 08.11.12.

9 Տե՛ս **A. Riedlmayer**, Erasing the Past: The Destruction of Libraries and Archives in Bosnia-Herzegovina, 1995, էջ 7-11:

10 Տե՛ս "В Москве открыли памятник, разрушенный в Кутаиси", Автор: Русский обозреватель в вт, 21/12/2010, http://www.rus-obr.ru/days/9050, 17.03.13:

11 Տե՛ս "Old Bridge Area of the Old City of Mostar". http://whc.unesco.org/en/list/946, 21.03.13:

12 Տե՛ս **Հ. Պետրոսյան**, Մշակութային էթնոցիդն Արցախում (Մշակութային ժառանգության բռնայուրացման մեխանիզմը), Ադրբեջանի պետական ահաբեկչությունը եւ էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, Կաճառ 4 (47-58) 2010, էջ 137-148:

համասովետական հնագիտական կոնգրեսի ժամանակ, որը տեղի է ունեցել Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվում 1985 թ., երիտասարդ ազերի հնագետ Ախունդովը կարդաց մի զեկույց, որով փորձում էր ցույց տալ, որ Ադրբեջանական ԽՍՀ տարածքի խաչքարերը աղվանական են: Նրա թվացյալ անվնաս, վերացական հնագիտական զեկույցը մտադրված քաղաքական սադրանք էր. Ադրբեջանի ներկայիս տարածքի, ներառյալ հատկապես Լեռնային Ղարաբաղը եւ Նախիջեւանը, բոլոր խաչքարերը որակվել են որպես աղվանական, ժողովուրդ, որ իր հերթին համարվել է այսօրվա ազերիների անմիջական նախահայրը[13]: Սակայն Արցախի ազգային-ազատագրական պայքարից հետո այս լծակները լիովին սպառեցին իրենց, ինչը նշանավորվեց հետխորհրդային Ադրբեջանի տարածքում հայկական մշակութային ժառանգության հանդեպ բացահայտ թշնամական վերաբերմունքի դրսեւորմամբ[14]: Այն իր գագաթնակետին հասավ Նախիջեւանի Ջուղա քաղաքի գերեզմանատան հիմնահատակ ոչնչացումով: Վերջինս հայկական ուշ միջնադարյան խոշորագույն գերեզմանադաշտն էր: Օտարերկրյա ճանապարհորդների վկայությամբ այնտեղ ԺԷ. դարի առաջին կեսին եղել է շուրջ 10000 խաչքար[15]: Այդ թիվը գրեթե անփոփոխ է մնացել մինչեւ Ի. դարի սկիզբը, երբ երկաթուղու անցկացումով խաչքարերի գրեթե հիսուն տոկոսը ավերվել է կամ օգտագործվել որպես շինանյութ[16]: Եւ ահա վերջին հարվածը հասցվեց 1998-2006 թթ., երբ ադրբեջանական զինված ուժերի կողմից պարբերաբար ենթարկվելով ավերումների, 2006-ի դեկտեմբերին գերեզմանադաշտն ամբողջությամբ հողին հավասարեցվեց[17]:

Կան մի շարք պատճառներ, որոնց շնորհիվ Ջուղայի գերեզմանատունը բացառիկ էր ոչ միայն հայկական, այլեւ համաշխարհային մշակույթի համար: Ջուղայի խաչքարերը հորինվածքային եւ պատկերագրական բազմաթիվ առանձնահատկություններով տարբերվում են խաչքարագործական մյուս դպրոցների նմուշներից: Դատելով դրանցում առկա զարդաքանդակային դեպքերից եւ կառուցվածքային ընդհանուր սկզբունքներից՝ Ջուղայի վարպետները, ծանոթ լինելով հայկական մնացյալ բնակավայրերի խաչքարագործական ավանդույթներին, ստեղծել են իրենց ինքնատիպ ոճը: Վերջինս իր վրա մեծապես կրում է խաչքարերի պատվիրատուների՝ հիմնականում հարուստ առեւտրականների (խոջաներ) վարած կենսակերպի ազդեցությունը: Հայտնի է միջազգային առեւտրական հարաբերություններում, հատկապես Պարսից արքունիքում նրանց բարձր դերակատարման մասին[18]: Ասվածի վկայությունն են խաչքարերի հիմնական առանձնահատկություն հանդիսացող սրածայր կամարները, որոնք լայն կիրառում

13 Տե՛ս **L. Philip Kohl**, Clare Fawcett, էջ 154:

14 Տե՛ս **Ն. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 137-148:

15 Տե՛ս **A. Rhodes**, Divers voyages et missions du P. A. de Rhodes en la Chine et autres Royaumes avec son Retour en Europe par la Perse et l'Armenie. Paris: Sebastian Cramoisy, 1653, էջ 416:

16 Տե՛ս **Ա. Այվազյան**, Ջուղայի կործանված խաչքարերի սիմֆոնիան, Երեւան, 2007, էջ 5:

17 Տե՛ս "High-Resolution Satellite Imagery and the Destruction of Cultural Artifacts in Nakhchivan, Azerbaijan". http://shr.aaas.org/geotech/azerbaijan/azerbaijan.shtml, 17.01.03:

18 Տե՛ս **Լեո**, Խոջայական կապիտալը եւ նրա քաղաքական եւ հասարակական դերը հայերի մեջ, Երեւան, 1934, էջ 56-58:

են ունեցել Սեֆեյան Իրանի ճարտարապետության մեջ[19]: Օտար մշակութային ազդեցության մեկ այլ դրսևորում է մի զգալի խումբ խաչքարերի քիվերի վրա առկա գոթական սյունասրահների մոտիվը[20]: Առանձին պատկերաքանդակներ ակնհայտորեն երևան են բերում մոնոդոլական դիմագծեր, հնդկական ու չինատիբեթյան ճակատային (ֆրոնտալ) ներկայացման օրինակներ[21]: Այս խաչքարերին բնորոշ առանձնահատկություններից են նաև խորանախաչերը: Ի տարբերություն այլ խաչքարերի, որոնցում դրանք զբաղեցնում են խաչասալի կենտրոնական հարթությունը եւ ունեն գրեթե միանման համաչափություններ (ստորին թեւը 1.5-2 անգամ երկար է մյուս երեք թեւերից), Ջուղայի տիպական օրինակներում խորանախաչը ներկայացված է սլացիկ, երկարաձգված համաչափություններով: Բացի այդ, այստեղ հաճախ տեսնում ենք խորանախաչերի բազմապատկում (հանդիպում են 2, 4, 6 խորանախաչերով խաչքարեր): Ջուղայի դպրոցը մեծապես հետաքրքիր է նաև պատկերաքանդակների առատության եւ բազմազանության առումով: Աշխարհիկ պատկերները, որոնք հիմնականում ներկայացնում են հանգուցյալին՝ հեծյալի տեսքով կամ, առավել հազվադեպ, ինչպես նաև Աստվածամոր պատկերը, որոնք հիմնականում ուղեկցվում են հրեշտակներով կամ խաչերով: Տիպիկ ջուղայական է զգալի խումբ կազմող խաչքարերի միայն քիվերին առկա երկմարմին միագլուխ կերպարի պատկերումը: Այս դպրոցին անդրադարձած գրեթե բոլոր հետազոտողները փորձել են կերպարին տալ սեփական մեկնաբանություն[22]: Այս խաչքարերին բնորոշ հիմնական կառուցվածքային առանձնահատկություններն են՝ խաչասալի փոխված համամասնությունները՝ երկարությունը գերազանցում է լայնությանը երեքից չորս անգամ: Սալերը դեպի հիմքերը չեն նեղանում, պատվանդաններ չունեն եւ ուղղակի խրվում են հողի մեջ: Քիվը ճարտարապետորեն թույլ է արտահայտված եւ եզակի դեպքերում է սալի մակերեւույթից առաջ գալիս: Դրա փոխարեն ընդգծված սլաքաձեւ խորանը դրամատավորող եզրերի շնորհիվ հասցված է համարյա ռեալ-ճարտարապետական խորության[23]: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ վերը բերված բոլոր առանձնահատկությունները հիմնականում վերաբերում են Ջուղայի խաչքարագործական դպրոցի վերելքին պատկանող օրինակներին՝ ընդգրկելով 1570-ական թթ. մինչեւ 1605 թ.: Վաղ շրջանին պատկանող օրինակները առավել հարթաքանդակային են, զուրկ զարգացած շրջանին բնորոշ կանոնիկ պատկերագրական կաղապարներից: Ջուղայի խաչքարերն իրենց մշակման կատարելությամբ, ինքնատիպ պատկերագրությամբ եւ ահռելի քանակով հայկական միջնադարյան քանդակագործության զարմանահրաշ դրսեւորումներից են:

---

19 Տե՛ս "Architectural History of the Safavids". http://www.skyscrapercity.com/showthread.php?t=1125631, 24.05.13:

20 Տե՛ս **J. Baltrušaitis**, **D. Kouymjian**, Julfa on the Arax and Its Funerary Monuments, Armenian Studies, Galouste Gulbenkian Foundation, 1986, էջ 43:

21 Տե՛ս **Ն. Պետրոսյան**, Ջուղայի խաչքարերի պատկերագրությունը. ՊԲՀ, 2004, թ. 1, էջ 75:

22 Տե՛ս անդ, էջ 68-73:

23 Տե՛ս անդ, էջ 65:

Ուստի, պատահական չէր Ջուղայի գերեզմանատան ավերման փաստի շուրջ հայ հասարակության մեջ բարձրացած բողոքի ալիքը: Ամենուրեք տպագրվեցին հոդվածներ, տրվեցին մամլո ասուլիսներ, կազմակերպվեցին Ջուղայի խաչքարերի լուսանկարների ցուցահանդեսներ, նկարահանվեցին փաստավավերագրական ֆիլմեր[24]: Սա այն ուղղակի արձագանքն էր, որի նպատակն էր իրազեկել հայ հանրությանը, միջազգային ատյաններին, դատապարտել կատարվածը:

Ջուղայի գերեզմանատան վերջնական ավերումից մեկ տարի անց սկսվել եւ շարունակվում է խաչքարերի վերստեղծման լայնածավալ գործընթաց, որի նախադեպը մինչ այդ չի եղել խաչքարագործության ոլորտում: Տարբեր մարզերում, տարբեր վարպետների կողմից կերտվում ու կանգնեցվում են Ջուղայի խաչքարերի բազմաթիվ նոր օրինակներ: Ընդ որում՝ դա կատարվում է ոչ միայն ավանդական եղանակով՝ քարի օգտագործմամբ, այլեւ ընտրվում են բազմազան նյութեր՝ փայտ, մետաղ, մագաղաթ: 2007 թ. Վանաձորում ստեղծվում է կործանված խաչքարերից մեկի առաջին կրկնօրինակը՝ Բոգդան Հովհաննիսյանի նախաձեռնությամբ: Հաջորդ վայրը Գյումրին էր, որտեղ ստեղծվեցին 20 կրկնօրինակներ՝ տարբեր վարպետների կողմից: Խաչքարերի վերստեղծման երրորդ օջախը Երեւանն է՝ Ս. Հովհաննես եկեղեցու բակը, որտեղ կանգնեցված է 8 խաչքար՝ Վարազդատ Համբարձումյանի կատարմամբ: Մեկ խաչքար կանգնեցվել է Նոյեմբերյանի տարածաշրջանի սահմանամերձ Բերդավան գյուղի գերեզմանատանը: Վարպետը Արմեն Երգենյանն է: Ջուղայի խաչքարերի կոտորածին իր ինքնատիպ արվեստով արձագանքել է նաեւ նկարիչ Արարատ Սարգսյանը՝ թղթի եւ մետաքսի վրա դաջելով 36 խաչքար: Էջմիածնից Ալբերտ Բարխուդարյանն իր աշխատանքների համար ընտրել է տանձենու փայտը: Այսքանով կրկնօրինակման գործընթացը չի ավարտվում: Հայաստանի տարբեր մարզերում շարունակվում են ջուղայական ոճի խաչքարերի նորանոր նմուշներ հայտնվել:

Ինչպես արդեն նշվեց, խաչքարի առաջին կրկնօրինակը ստեղծվել է Վանաձորում խաչքարագործ վարպետ Բոգդան Հովհաննիսյանի կողմից (նկ. 1): Լուսանկարների մեջ երկար փնտրելուց եւ Ա. Այվազյանի հետ խորհրդակցելուց հետո նա ընտրում է մի օրինակ, որը, իր խոսքերով, Ջուղայի լավագույն խաչքարերից է (նկ. 2)[25]: Վարդյակը եզերող շրջագոտու վրա հիշատակագիրն է. «Ս(ուր)բ խ(ա)չս բարեխաւս առ Ք(րիստո)ս փրկութեան Ա(ստվա)ծատուրին հոգուն որդ(ու)ն Մկրտիչին»: Վարդյակն ընդգրկող քառանկյան չորս անկյուններից երկուսում տարեթիվն է՝ թվ ՌԾԱ. - 1602 թ.: Քիվի վերնամասում կա եւս մեկ հիշատակագիր. «Ս(ուր)բ խ(ա)չս բարեխաւս առ Ք(րիստո)ս Ծատուրին հոգուն»: Կրկնօրինակում արձանագրությունները ճշգրտորեն կրկնվում են: Սա Ջուղայի դպրոցի դասական օրինակներից մեկն է՝ խորանային հատվածում սրածայր կամարների տակ ամփոփված 4 խաչաքանդակներով եւ վարդյակից ներքեւ գտնվող հեծյալի պատ-

24 Տե՛ս "Julfa - History of Armenian khachkars destruction by Azerbaijan". https://www.youtube.com/watch?v=ispMSktZNyg, 14.10.12, "Azeris Destroying Armenian Cemetery In Julfa " - Part 1/2, https://www.youtube.com/watch?v=GSJB6K9pSH8, 14.10.12:

25 Տե՛ս **Ա. Այվազյան**, Ջուղայի վիմագրական ժառանգությունը, հտ. Ա., Երեւան, 2004, լուս. 427:

կերաքանդակով: Երկու խաչքարի համեմատական քննությունը ցույց է տալիս դրանց գրեթե կատարյալ նմանությունը: Սակայն աշխատանքը վարպետին հեշտությամբ չի տրվել: «Սկզբում կարծում էի, թե որեւէ դժվարություն չի առաջանա, սակայն հենց գործի անցա, հասկացա, որ ամեն ինչ այլ է, այլ են զարդանախշերը, ոճը», - խոստովանում է վարպետը[26]: Այդ պատճառով գնում է Էջմիածին՝ ուսումնասիրելու այստեղ պահվող Ջուղայից տեղափոխված խաչքարերի եզակի օրինակները: Ջննում է, շոշափում, անգամ փայլաթիթեղով զարդանախշերի կաղապարն է սրանում: Խաչքարը կերտելիս որեւէ նոր բան չի ավելացվել եւ չի խեղաթյուրվել, պահպանվել են համաչափությունները: Վանաձորի օրինակը ուշագրավ է նրանով, որ Ջուղայի դեպքերին առաջին անմիջական արձագանքը տրվել է հենց այս վարպետի կողմից: Նա փորձել է զգալ եւ փոխանցել նախնի վարպետների հետ ժառանգորդության զգացումը, նրանց կատարողական հմտությունները եւ տեխնիկան: Աշխատանքի ընթացքում զինվորական հագուստ կրելով՝ վարպետը փորձել է շեշտել հակադրությունը կործանող զինվորի եւ կերտող զինվորի միջեւ:

Ջուղայի խաչքարերի կրկնօրինակների թվով Գյումրին առաջինն է: Այստեղ կանգնեցված է 20 խաչքար, որոնց համար ընտրվել է քաղաքի կենտրոնական հատվածներից մեկը: Խաչքարերի կրկնօրինակման եւ կանգնեցման միտքը պատկանում է Գյումրիի նախկին քաղաքապետ Վ. Ղուկասյանին: Խաչքարերի ստեղծմանը մասնակցել են մի քանի վարպետներ, որոնց թվում են՝ Անդրանիկ Ղափլանյանը, Աշոտ Սարիբեկյանը, Սարիբեկ Սարիբեկյանը եւ Անդրանիկ Ղուկասյանը: Խաչքարագործ Ա. Ղափլանյանի վկայությամբ՝ դրանք կանգնեցվել են առաջին հերթին որպես ապացույց, որ ազերիների կատարած քայլը ի զորու չէ վերացնելու այդ գերեզմանատան հետ կապված պատմական հիշողությունը: Դրանց ստեղծման հիմնական դրդապատճառը ելնում է ազգային արժանապատվությունից. «Որքան էլ կոտորեք, դարձյալ կստեղծենք»[27]: Այն կարծես հակահարված է կատարվածին, կենսունակության ապացույց: Գյումրիի օրինակները աչքի են ընկնում ընտրված խաչքարերի տիպական եւ ժամանակագրական բազմազանությամբ: Ուշագրավ է, որ խաչքարերից շատերն ակնհայտ անհամապատասխանություն ունեն բնօրինակների հետ: Խախտված են համաչափությունները, ի հայտ են եկել պատվանդաններ եւ կրկնապատվանդաններ, տիպական զարդաքանդակներում եւս առկա են շեղումներ, մտցված են նոր դետալներ: Արձանագրությունները հազվադեպ են վերարտադրված, երբեմն դրանք փոխարինված են զարդաքանդակային պարզ դետալներով: Օրինակ՝ խաչքարերից մեկում (ընդօրինակում է 1596 թ. մի խաչքար[28]), թեեւ բոլոր զարդաքանդակները, այդ թվում խնջույքի տեսարան ներկայացնող պատկերաքանդակը տրվել են հնարավորին չափ անխախտ նմանությամբ, սակայն վարդյակի շրջանագծի վրայի արձանագրությունը (Սբ խաչս բարեխաւս առ Քս Մանուկ Պետրոսին) փոխարինվել է հյուսածո զարդանախշով: Մեկ այլ՝ 1557 թ. խաչքարի կրկնօրինա-

26 Խաչքարագործ Բոգդան Հովհաննիսյանի հետ հարցազրույցից, Վանաձոր, 2012, օգոստոս (այս եւ հաջորդ հարցազրույցները՝ Մարիաննա Հարությունյանի):

27 Անդ:

28 Տե՛ս **Ա. Այվազյան**, Ջուղայի կործանված խաչքարերի սիմֆոնիան, էջ 244:

կում[29], որտեղ ներկայացված է խաչյալ Քրիստոսը, խաչքարի ծավալից դուրս է մնացել արձանագրության հատվածը, վարդյակը հատել է այն ամփոփող քառանկյան վերնամասը, կենտրոնական խաչի հյուսածո զարդանախշը, ինչպես նաեւ նրան կից երկու փոքր խաչերի զուգաթել հյուսվածքը փոխարինվել են առավել պարզունակ զարդաձեւերով: Թռչուններով եւ բուսական ասիմետրիկ զարդաքանդակներով հարդարված քիվով 1523 թ. եզակի խաչքարի[30] (նկ. 3) կրկնօրինակում երկու կողմի զարդարուն եզրագոտիները փոխարինվել են հարթ կիսագլարներով (նկ. 4): Նման տարբերությունները բնօրինակների հետ բազմաթիվ են, ուստի, խուսափելու համար կրկնություններից եւ երկար նկարագրություններից, կարեւոր է շեշտել, որ կատարող վարպետները սկզբունքորեն իրենց առջեւ խնդիր չեն դրել կրկնօրինակման մեջ հասնել բացարձակ ճշգրտության: Վերարտադրել են այնքան, որքան թույլ է տվել պահպանված նկարների որակը (նկ. 7, 9): Վարպետն անգամ նշում է իր տեխնիկական առավելությունը նախնի վարպետների հանդեպ՝ հավակնելով բնօրինակի հանդեպ գերազանցության: Սա կարծես խաչքարերի կոտորածին նվիրված հուշարձան է՝ բաղկացած մի խումբ կոթողներից: Այլ խնդիր է, թե որքանով է տվյալ հուշահամալիրը կամ ինչպես ընդունված է անվանել «խաչքարերի պուրակը» արդարացնում իր դերն այն միջավայրում, որտեղ տեղակայված է: Գտնվելով Ամենափրկիչ եկեղեցու հարեւանությամբ՝ այն միաժամանակ շատ մոտ է բնակելի շենքի բակին: Նույն եկեղեցու բակում է տեղակայված նաեւ երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը: 2012 թ. հոկտեմբերին եկեղեցու հարակից տարածքում տեղ գտավ նաեւ Պոլոզ Մուկուչի արձանը: Հայտնի չէ, թե այս խճանկարը անհատների սեփական ճաշակի եւ մտահղացումների ինչպիսի նոր դրսեւորումներով դեռ կլրացվի: Հատկանշական է, որ Գյումրիի պարագային որպես կորուստ ընկալվել է նաեւ քանակը, ուստի կրկնօրինակման մեջ եւս կարեւոր շեշտադրում է արվում քանակի վրա: Նախատեսվում է կործանված 10 հազարից յուրաքանչյուր 100-ի դիմաց կանգնեցնել 1 խաչքար: Սակայն, պետք է նշել, որ պուրակի բացումից հետո այս գործընթացում էական աշխուժություն չի նկատվել, նոր խաչքարեր չեն ավելացել: Հայտնի չէ, թե ի վերջո նախատեսված պուրակը երբ կստանա իր ավարտուն տեսքը: Դատվիրատուի (Վ. Ղուկասյան) քաղաքական գործիչ լինելը, ինչպես նաեւ խաչքարերի պուրակի բացմանը ՀՀ նախագահի ներկայությունը որոշակի քաղաքական երանգ են հաղորդել կատարվածին, սակայն Գյումրիի խաչքարերը շարունակում են մնալ անհատական նախաձեռնության դրսեւորում:

Երեւանում՝ Ս. Հովհաննես եկեղեցու բակում, կանգնեցված են Ջուղայի ութ խաչքարի կրկնօրինակ: Մտահղացումը Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւորական Տեր Դանիել քահանա Բաղումյանինն է, խաչքարագործը Վարազդատ Համբարձումյանն է: Այստեղ կանգնեցված յուրաքանչյուր խաչքար ընտրվել է առանձնահատուկ ուշադրությամբ՝ փորձելով ներկայացնել ջուղայական դպրոցի վերելքին բնորոշ ողջ հարստությունը: Կրկնօրինակվել են 1556-1602 թթ. խաչքարեր (նկ. 5, 8)[31]: Կատարողական

29 Տե՛ս **Ա. Այվազյան**, Ջուղայի վիմագրական ժառանգությունը, լուս. 401:

30 Տե՛ս անդ, լուս. 678:

31 Ս. Հովհաննես եկեղեցու եւ Գյումրիի օրինակներում չի հաջողվել խուսափել կրկնություններից: Դա

առումով վարպետը փորձել է առավելագույն ճշգրտության հասնել: Սակայն այստեղ ևս խաչքարերը կրկնապատվանդաններ ունեն[32]: Դրանց կանգնեցման նպատակը, ըստ Վ. Համբարձումյանի, Ջուղայի խաչքարագործական դպրոցի ավանդույթները սերունդներին փոխանցելն է, խաչքարային բազմազանությունը պահպանելը[33]: Հոգևորականի նախաձեռնությունն ու եկեղեցու բակում կանգնեցվելը արտացոլում են հոգևոր դասի արձագանքը խաչքարերի կոտորածին: Տեր Դանիել քահանայի խոսքերով՝ խաչքարերի կրկնօրինակների ստեղծումով քայլ է արվում նորից վերապրեցնելու փոշիացած, արդեն գոյություն չունեցող խաչքարերը ևս փոխանցել դրանք դարեդար[34]:

Արարատ Սարգսյանը խաչքարերի կոտորածին արձագանքում է «Խաչքարեր» յուրահատուկ ակցիայով: Ջուղայի 10.000 խաչքարերից 36-ը նա վերականգնել է թղթի եւ մետաքսի վրա՝ գունազարդ գրքում դասավորելով դրանք այբբենական կարգով: Նախագիծը ներառում է նաեւ երկու փոքր ֆիլմ, որոնցից մեկը քանդելու մասին է, իսկ մյուսը՝ վերականգնելու: «Ազգեր կան, որոնք ինքնահաստատվում են՝ քանդելով ուրիշների արածը, ազգեր էլ կան, որոնք սարքելու մեջ են իրենց ինքնությունը տեսնում», - ասում է Ա. Սարգսյանը[35]: Մի ֆիլմում ցուցադրվում են այն կադրերը, որտեղ ադրբեջանցի զինվորականները հողին են հավասարեցնում հայկական գերեզմանոցը՝ փոխարենը զինվորական հրաձգարան կառուցելով, իսկ մյուս ֆիլմը պատկերում է 36 խաչքարերի երկրորդ ծնունդը՝ քայլ առ քայլ ներկայացնելով խաչքարերի պահպանված բեկորների, լուսանկարների մշակումը, թղթային հիմքի ստեղծումն ու խաչքարերի արարումը, որը տեղի է ունեցել նկարչի արվեստանոցում: Խաչքարերի վերականգնումը Ա. Սարգսյանի նախագծում սոսկ պատմափաստագրական վերակենդանացում եւ խաչքարերի գեղագիտական որակը պահպանելու փորձ չէ, այլեւ՝ անտարբեր չլինելու կոչ:

Էջմիածնաբնակ Ալբերտ Բարխուդարյանը հոգեկան ծանր ճգնաժամ է ապրել՝ դիտելով խաչքարերի ավերման տեսարանները: Որպես հայ մարդ ու արվեստագետ՝ պարտավորված է համարում վերականգնել ոչնչացված խաչքարերը: Ջուղայի խաչքարերի համար փորագրիչն ընտրել է տանձենու փայտը: Իր ստեղծած խաչքարերը բնօրինակներից փոքր են 10 անգամ: Ասում է՝ հատուկ է այդպես արել, որպեսզի հնարավոր լինի իրականացնել խաչքարերի ցուցադրությունը համայն աշխարհում: «Իմ այս քայլով կոչ եմ անելու աշխարհի առաջավոր մարդկությանը պահպանել անցյալի մշակութային արժեքները՝ անկախ դրանց աշխարհագրական դիրքից ու ազգային պատկանելությունից: Չի կարելի նորը ստեղծել անցյալը ոչնչացնելու գնով: Իսկ եթե այդ ոչնչացումն ուղղակի ազգամիջյան դրդապատճառներ ունի, առավել ևս ներելի չէ»[36]:

խոսում է այն մասին, որ վարպետները նախապես անտեղյակ են եղել միմյանց աշխատանքներին:

32 Պատճառը (ինչպես նաեւ Գյումրիի օրինակների պարագային) թերեւս տեխնիկական է, քանի որ Ջուղայի խաչքարերը, տեղադրված լինելով անմիջապես հողի մեջ, մեծապես վնասվել են խոնավությունից եւ հողի հետ շփումից:

33 Խաչքարագործ Վարազդատ Համբարձումյանի հետ ունեցած հարցազրույցից, Երեւան, 2012, օգոստոս:

34 Տեր Դանիել քահանա Բաղումյանի հետ հարցազրույցից, Երեւան, 2012, հոկտեմբեր:

35 **Ն. Ղահվերդյան**, Քանդվող եւ վերականգնվող խաչքարեր, http://www.armtown.com/news/am/168/20060920/7287/, 20.11.2006:

36 **Մ. Արսենյան**, Ջուղայի խաչքարերը վերականգնվում են, http://www.aravot.am/2009/12/05/190231,

Ինչպես արդեն նշվել է, այսքանով Ջուղայի նոր խաչքարերի կերտումը չի ավարտվում, տարբեր վայրերում, տարբեր վարպետների կողմից շարունակաբար կերտվում ու կանգնեցվում են ջուղայական տիպի նորանոր օրինակներ: Սակայն, կարծում ենք, այս գործընթացում առավել կարեւոր է ոչ թե վերստեղծված օրինակների առատությունն ու բնօրինակների հետ անխախտ նմանությունը, այլեւ գաղափարական հիմքը, որով այն պայմանավորված է: Ավերվածի վերստեղծումը տուժած կողմից քայլ է առաջին հերթին ինքն իրեն ապացուցելու, որ շարունակում է պահպանել եւ իր հիշողության մեջ կրել անցյալի կորսված պատառիկները: Դա մի քայլ է, թեկուզ ձեւական կերպով, պահպանելու մշակութային ժառանգության ամբողջականությունը: Սակայն, ինչպես նշում է Ն. Մարությանը, կորուսյալ անցյալի վերականգնմանն ուղղված փորձերը հաճախ լինում են ոչ թե արդյունավետ, այլ լոկ խորհրդանշական ու, այդպիսով, դառնում են անցյալի շարունակության դրսեւորումներ միայն նմանակումների ձեւով[37]: Սրանով հանդերձ վերստեղծումն առաջին հերթին հոգեբարոյական վերականգնման գործույթ է՝ միտված ազգային խոցված ինքնագնահատականի բարձրացմանը: Հետեւաբար այլ են նաեւ վերստեղծված օրինակների գնահատման չափանիշները: Ինչպես նշում է Յու. Բորբովը, վերստեղծման անհրաժեշտությունն ու որակի չափանիշները արտահայտում են այն էթիկական, գեղագիտական եւ տեխնիկական նախընտրությունները, որոնք կարգավորվում են հասարակական պահանջարկով: Որքան նշանակալի է կործանված ստեղծագործությունը, այնքան քիչ արդարացված է դրա վերստեղծումը՝ ինչպես էթիկական, այնպես էլ գեղագիտական տեսանկյունից: Հերթական հակասությունն այն է, որ վերստեղծումը կարող է անհրաժեշտություն լինել որոշակի նշանային արժեհամակարգերում հասարակության արդիական պահանջմունքի բավարարման համար: Հասարակական պահանջարկը, որը տվյալ պարագային բարոյական վերականգնման (ռեաբիլիտացիա) պահանջարկ է, յուրօրինակ խմբային զղջում, այնքան արդիական է, որ ազգային հոգեւոր խորհրդանիշի վերստեղծումը դարձնում է էթիկապես հիմնավորված գործողություն: Հավանաբար միայն նման դեպքերում է, երբ, բխելով առանձնահատուկ բարոյական պահանջմունքից, հիմնավորված դաշտ է առաջանում անցյալի ստեղծագործության վերստեղծման համար[38]: Թեեւ պետական ներգրավվածությունը այլ երանգ ու ծավալ է հաղորդում մշակութային հարվածից հետո վերականգնման ընթացքին, սակայն, ինչպես տեսնում ենք Ջուղայի նոր խաչքարերի օրինակով, տարբեր օջախների գրեթե համաժամանակյա բռնկումներով եւ ընդունած լայն ծավալներով, անհատական նախաձեռնությունները եւս կարող են ազդեցիկ արձագանք լինել:

27.05.13:

37 Տե՛ս **Ն. Մարության**, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ. «Նորավանք», ԳԳՀ, Երեւան, 2006, էջ 6:

38 Տե՛ս **Ю. Г. Бобров**, նշվ. աշխ.: